

**ԱՐՏԱՇԱՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՅՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ՏԱՃԱՐԱՄԵՐԸ  
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

*Ներկայացվում է անտիկ Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքի հյուսիսարևմտյան թաղամասի պեղված հատվածը: Այն ընդգրկում է կենտրոնական տաճարային համալիրի շինությունները (տաճար, սրբազան հրապարակ, երկրորդ հարթակ, գանձատուն): Քննարկվում են դրանց հատակագծային և ծավալատարածական հորինվածքների, ինչպես և տաճարամերձ շինությունների հատակագծային լուծումները (բաղնիքը, մույթերով դահլիճը):*

**Առանցքային բառեր.** տաճար, սրբազան հրապարակ, հարթակ, կրաքարե շարվածք, բաղնիք, գանձատուն, դահլիճ, մույթ

Արտաշես թագավորը մ.թ.ա. 180-ական թվականներին միավորված Հայաստանում հիմնադրեց նոր մայրաքաղաք՝ Արտաշատ (ըստ հռոմեական պատմիչների՝ Արտաքսատա) անվանումով [1,2]: Քաղաքի տեղանքի ընտրությունը ստրատեգիական առումով կատարված էր անթերի: Քաղաքը, ինչպես պեղումներից բացահայտվեց, կառուցապատված է նախապես մտածված միասնական հատակագծով [3]: Քաղաքի միջնաբերդը տեղադրված է միմյանց հետ կապակցված 10 պարսպապատ բլուրների վրա, իսկ բուն (ներքին) քաղաքը, ինչը նույնպես պարսպապատված է, գտնվում է միջնաբերդի հարավային կողմում:


Արտաշատ քաղաքը մի քանի անգամ ավիրվել և նորից վերակառուցվել է:

ՀԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը Արտաշատ քաղաքի ուսումնասիրությունը և պեղումները սկսել է դեռևս 1970թ., ինչը շարունակվում է մինչ այսօր:

2003թ. սկսված պեղումներ են տարվում Արաքս գետից մոտ 70մ հեռավորության վրա գտնվող տեղամասում, ուր հայտնաբերվեց քաղաքի հյուսիսարևմտյան թաղամասի կրոնահասարակական կենտրոնի համալիրը: Համալիրը բաղկացած է տաճարից՝ իր սրբազան հրապարակով, որի հարավարևելյան կողմին կցված է հասարակական բաղնիքը և այլ տարբեր բնույթի շինություններ (նկ. 1):

Համալիրի պատերը ճիշտ կողմնորոշված են երկրի կողմերի նկատմամբ: Տաճարը գտնվում է տեղանքի ամենաբարձր ժայռոտ մասում և իշխել է ամբողջ տարածքի վրա: Պահպանվել է տաճարի հիմնապատվանդանի հիմքերի մի մասը (նկ. 2): Այդ հիմնապատվանդանի (35,4 x 36,1մ<sup>2</sup> չափերով) հիմքերը կառուցված են մեծածավալ տեղական կոպտատաշ մարմար քարերից՝ հարմարեցված բնական ժայռի ելուստների հետ, որոնք նույնպես մշակված են: Հիմնապատվանդանի հյուսիսարևելյան եզրը պահպանվել է 1,65մ բարձրությամբ: Դրա հավանական ընդհանուր բարձրությունը 3մ է: Այդ ժայռոտ տեղանքը հարթեցված է լրացուցիչ

լիցքով և ըստ տեղում հայտնաբերված բեկորների՝ սալարկված է եղել 0,15...0,20՝ հաստությամբ սպիտակ կրաքարով: Տաճարի մասին կարելի է մոտավոր պատկերացում կազմել հայտնաբերված և մեծ խնամքով տաշված բեկորների մանրամասներից: Սպիտակ կրաքարից բեկորները ներկայացնում են հոնիական (նկ. 3) և կորնթական օրդերների խոյակների, քիվերի, տիմպանի, ակոսավոր սյունների բների, ատտիկական խարիսխների և այլ հարուստ զարդաքանդակված մասեր՝ ջարդոտված վիճակում:



**Նկ. 1. Պեղված թաղամասի ընդհանուր հատակագիծը**



**Նկ. 2. Տաճարի հիմնապատվանդանը**



**Նկ. 3. Հոնիական խոյակը և սյան բունը**

Գտնված եզրապատի (անտ) մի քարից կարելի է եզրակացնել, որ նստսի պատի լայնությունը 0,94՝ է: Մանրամասների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տաճարը եղել է հոնիական պերիպտերոս տիպի՝ Գառնիի տաճարի նման: Ուսումնասիրությունը պարզեց, որ սպիտակ կրաքարը տեղական շինանյութ է, որի հանքավայրը գտնվում է պատմական Արտաշատ քաղաքից ոչ հեռու:

**Սրբազան հրապարակը** գտնվում է տաճարի արևելյան կողմում: Սրբազան հրապարակի հիմնապատվանդանի բարձրությունը 3մ ցածր է տաճարի հիմնապատվանդանից, բայց 6մ բարձր է հիմնահողի մակերեսից և նրա ժայռոտ տարածքը հորիզոնական դիրքի է բերված հողի և խճի լիցքով: Դրա ամբողջ տարածքը պարագծով շրջապատված է 2մ լայնությամբ հենապատով, որի 1,2մ-ը շարված է անկանոն տեղական քարե շարվածքով (շաղախով), իսկ հենապատի արտաքին մասը երեսապատված է 0,8մ լայնությամբ կանոնավոր ռուստիկ ձևով մշակված կրաքարերով, որոնք միմյանց ամրակցված են հորիզոնական հարթության մեջ «ծիծեռնակապոչ» փորվածքների մեջ տեղադրված փայտե կապերով: Սրբազան հրապարակի տարածքը 35,9 x 35,3մ<sup>2</sup> է:

Հելլենիստական շինարարական տեխնիկայում ընդունված քարերի կապակցման նկարագրված ձևը հատկապես լավ է դիմակայում երկրաշարժերին՝ փաստորեն ստանձնելով «հակաերկրաշարժային» հորիզոնական գոտու դեր: Այդ հիմնապատվանդանը հարավարևմտյան անկյունում ունի վերակառուցման հետքեր: Սրբազան հրապարակի հիմնապատվանդանի հարավային պատի մոտավորապես կենտրոնում պահպանվել են 6 աստիճաններ (նկ. 4,5), որոնց միջոցով բարձրացել են սրբազան հրապարակ: Դրանք կառուցված են տուֆ քարից և երկրորդ շրջանի վերակառուցում են: Այդ աստիճանների վերականգնումից երևում է, որ նախնական վիճակում դրանց թիվը եղել է 23, որոնց ընդհանուր բարձրությունը կազմել է 6մ: Աստիճանների առջև գտնվում է ընդարձակ հրապարակ: Կառուցապատումը շարունակվել է հրապարակի հյուսիսային և հարավային ուղղություններով:



*Նկ. 4. Սրբազան հրապարակ բարձրացող աստիճանները*




*Նկ. 5. Սրբազան հրապարակ բարձրացող աստիճանների ընդհանուր տեսքը*

**Երկրորդ հարթակը** կցված է սրբազան հրապարակի հյուսիսային կողմին և ներկայացնում է ուղղանկյուն՝ 9,1 x 30,0մ<sup>2</sup> չափերով: Այն սրբազան հրապարակի արևելյան անկյունից 4մ հետ է ընկած: Հարթակի հիմնապատվանդանի ամբողջ պարագծով կառուցված է սպիտակ կրաքարի կանոնավոր չոր շարվածքով (ծիծեռնակապոչ փորվածքներով, փայտե ներդիրներով ամրացված, ռուստիկ մշակումով) պատ: Հետագայում հարթակի արևելյան պատն ամրացնելու նպատակով դրան կցաշարել են հենապատ, որն ունի երեք շարք կազմող հաստություն և կրաքարով կանոնավոր ռուստիկ մշակումով երեսապատ (նկ. 6):



**Նկ. 6. Երկրորդ հարթակի հարավարևմտյան անկյունը**



Չափագրող  
Ճարտարապետ՝ Կանեցյան Ամինա

**Նկ. 7. Հասարակական բաղնիքի հատակագիծը**

Հենապատի ընդհանուր հաստությունը 2մ է: Հարթակի հիմնապատվանդանի պեղումներով բացված հյուսիսային կողմի պատը պահպանվել է 2,4...3,0մ բարձրությամբ՝ հինգ շարք քարերով: Դրանց քարերը նույնպես միացված են իրար՝ վերը նկարագրված «ծիծեռնակապոչ» գամերի սկզբունքով:

**Հասարակական բաղնիքն** ըստ հնագիտական նյութերի, թվագրվում է 2-րդ դարի սկզբով : Այն կցված է «սրբազան» հրապարակի հյուսիսարևելյան անկյունային մասին: Երկրի կողմերի նկատմամբ ունեցած կողմնորոշմամբ համապատասխանում է հելլենիստական բաղնիքների ունեցած դիրքորոշման կանոններին ( ըստ Վիտրուվիոսի) [4]:

Բաղնիքը բաղկացած է 9-ը սենյակներից և միջանցքից (նկ. 7,8) [5]:

Սենյակներից յուրաքանչյուրն ունի իր գործնական նշանակությունը: Բաղնիքի համալիրի կառուցումը, ըստ մեր ուսումնասիրության, կատարվել է երկու շինարարական փուլերով: Ի սկզբանե բաղնիքը բաղկացած է եղել չորս սենյակներից, որոնք հաջորդական ձևով դասավորված էին մի առանցքի ուղղությամբ (արևելք-արևմուտք): Ամենամեծն առաջին սենյակն է՝ 7,7 x 3,7մ<sup>2</sup> չափով, որը ծառայել է իբրև նախասրահ (Apodyterium): Այն ունի երեք արտաքին մուտքեր և ներքուստ զարդարված է որմնախորշերով՝ արձաններ և ճրագներ տեղադրելու համար (նկ. 9):

Սենյակի արևելյան կողմում կա նաև փոքր ավազան: Նախասրահի արևելյան ներքին դռնով մտնում են միմյանց հաջորդող երեք լողասենյակները, որոնցից առաջինը սառը ջրի լողարանն էր (Frigidarium, 3,6x5,9մ<sup>2</sup> չափերով): Սենյակի հարավային մասի ավազանը վերաբերում է երկրորդ շինարարական շրջանին, այն ունի նաև առանձին հնոց: Երրորդ սենյակը ներկայացնում է գոլ ջրի լողարան (Tepidarium, 3,7x6,9մ<sup>2</sup> չափերով) և չորրորդը՝ տաք ջրի

լողարան (Caldarium, 4,2x7,8մ<sup>2</sup> չափերով): Վերջինս ունի երկու ավազան: Տաքությունը պահպանելու նպատակով այդ լողասենյակների դռների բացվածքները դասավորված չեն միևնույն առանցքի ուղղությամբ: Նկարագրվող բաղնիքի համալիրի հատակագծային հորինվածքը հիշեցնում է այսպես կոչված «հռոմեական փոքր բաղնիքների» տիպը, որոնց օրինակը ունենք Գառնիում: Լողասենյակների նույն առանցքային ուղղությամբ դասավորված փոքր բաղնիքների կառուցումը բնորոշ է ամբողջ անտիկ աշխարհին: Դրանք կառուցվել են ինչպես Հռոմում, նույնպես և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում (Սիրիա, Պաղեստին, Միջագետք, Փոքր Ասիա) նաև Վրաստանում և այլուր [5-8]: Նկարագրվող բաղնիքի շինարարական երկրորդ շերտին են վերաբերվում նաև հետագայում, ընդարձակելու նպատակով հարավից կցված 5 սենյակները (կիսակլոր շոգեբաղնիք, միջանցք, հանդերձարան, անկյունային սենյակ, մեծ հանգստասրահ) և կաթսայատունը, որոնց պատերի կցման տեղերը նախնական շենքին՝ տեսանելի են: Մառը և գոլ ջրերով լողասենյակների հյուսիսային պատին կցված կիսակլոր շոգեբաղնիքը (Lakonika, 3x4մ<sup>2</sup> չափերով), մուտքով կապված է նորաստեղծ միջանցքի (1,60x6,55մ<sup>2</sup> չափերով) հետ: Նախամուտքի հարավային մասից, մեկ այլ դռով մտնում են երկրորդ շինարարական շերտին պատկանող հավելակառույց հանդերձարան և անկյունային սենյակ (նկ. 10):



**Նկ. 8. Բաղնիքի ընդհանուր տեսքը**



**Նկ. 9. Նախասենյակի պատի որմնախորշերը**

Վերջինս տաքացվում էր առանձին վառարանով: Շոգեբաղնիքից և նորաստեղծ միջանցքից բացված է մուտք դեպի մեծ հանգստասրահը (7,55x9,82մ<sup>2</sup> չափերով), որն ունի աղեղաձև խորշ (էքսեդրա): Տաք ջրի լողասենյակի, շոգեբաղնիքի և մեծ հանգստասրահի միջև տեղադրված է կաթսայատունը (7,55x5,65մ<sup>2</sup> չափերով), որը միաժամանակ տաքացնում էր նշված չորս սենյակները: Բաղնիքը ջեռուցվել է հիպոկաուստային համակարգով. կաթսայատնից տաք օդը և ծուխը հատակների տակ և պատերի մեջ թողնված հատուկ բացվածքներով տարածվում էր դրանց մեջ՝ տաքացնելով հատակները, պատերը և առաստաղները: Լողարանները տաքացնող հիպոկաուստային համակարգը առաջին անգամ օգտագործվել է Հռոմում: Արտաշատի բաղնիքի համալիրի պատերը արտաքուստ և ներքուստ սվաղված են կրաշաղաղով: Պատի մակերեսը ծածկված էր ջրակայուն տարբեր գույների ներկերով, որոնցից պահպանված մանր կտորները թույլ չեն տալիս եզրակացնելու ընդհանուր նկարվածքի ձևի մասին:



*Նկ.10. Բաղնիքի անկյունային սենյակը*



*Նկ.11. Բաղնիքի ջրամատակարարման խողովակները*

Բաղնիքի բոլոր սենյակների հատակները և դռան շեմերը ծածկված են սպիտակ և ներկված ֆելզիտ քարից պատրաստված հարուստ խճանկարներով: Ցավոք, խճանկարները պահպանվել են հատվածաբար և ոչ բոլոր սենյակներում: Պահպանված հատվածներից և բեկորներից կարելի է պատկերացում կազմել դրանց բազմազույն երկրաչափական նախշերից կազմված հորինվածքների մասին:

Պեղումներով հայտնաբերվել են նաև բաղնիքի ջրամատակարարման համար թրծած կավից պատրաստված խողովակաշարերի հատվածներ (նկ.11) և կրաքարե ջրբաժան հանգույցներ, ինչպես և ջրահեռացման առունների տարբեր հատվածներ: Այս ամենը դեռևս ամբողջական պատկերացում չի տալիս ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերաբերյալ:

«Գանձատուն» անվանումը մեր կողմից ներկայացվող այս շինությանը պայմանական է տրված: Շինության գործնական նշանակության վերաբերյալ մեր վարկածի համար կարող են կռվան հանդիսանալ նրա զանգվածեղ պատերը (2,1մ), սրբազան հրապարակին կից (հարավային կողմից) կառուցված լինելը և մուտքի դժվարամատչելիությունը: «Գանձատունը» կառուցված է պատվանդանի վրա, որի ընդհանուր բարձրությունը պետք է լիներ առնվազն 6մ: Այժմ այդ բարձրությունից պահպանված է 3,5մ (բարձրությունը հաշված է հիմնահողից): Շինությունն ունի 16,60x17,02մ<sup>2</sup> չափեր և գտնվում է սրբազան հրապարակի հարավային պատի արևելյան անկյունից 9,10մ հեռավորությամբ՝ բաղնիքի հարևանությամբ: Շինության արևմտյան կողմի մի մասի հիմնատակը ժայռ է, որը աստիճանաձև բարձրանալով և դեպի արևմուտք ձգվելով՝ միանում է սրբազան հրապարակի հիմնապատվանդանին: Շինության հյուսիս-արևմտյան ժայռոտ, դժվարամատչելի անկյունային մասում բացված է հիշատակված մուտքը, որն ունի 1մ լայնություն և բարձր է հիմնահողից 3,25մ: Այն հետագայում փակվել է:

Պեղումներով չի հայտնաբերվել ուրիշ արտաքին մուտք: Շինության «Գանձատուն» լինելու օգտին է վկայում նաև կառույցի շինարարության իրականացման ձևը. շինության արևմտյան, հարավային և արևելյան պատերը կառուցված են ստիլաբատոսի վրա, պատվանդանի պատերն ունեն 2,1մ հաստություն և կազմված են 1,4մ կրաշաղախով ամրացված բուտ շարվածքով, որը դրսի կողմից երեսապատված է 0,7մ հաստությամբ մեծ, լավ մշակված կրաքարե շարվածքով: «Գանձատուն» վերին մասը, ցավոք չի պահպանվել, բայց ըստ ընդունված ավանդության այն պիտի լիներ ոչ մեծ տաճար: Այդ շինությունն իր ճակատային լուծումով, հավանաբար, կազմակերպել և ամբողջացրել է սրբազան հրապարակի համակառույցի ծավալատարածական հորինվածքը:

**Մույթերով դահլիճը** գտնվում է երկրորդ հարթակի արևելյան կողմում՝ 4,5մ նրանից հեռու (նկ. 12): Այս դահլիճը թվագրվում է 3-րդ դարի սկզբով [10]: Այն ավարտում է տաճարամերձ հրապարակի հյուսիսային մասի կառուցապատումը: Մույթերով դահլիճը ներկայացնում է ուղղանկյուն շինություն (12,5x20,0մ<sup>2</sup> չափերով), կողմնորոշված արևելք-արևմուտք: Ներսում ունի երկշաքք դասավորված ութ մույթեր (1,1x1,2մ<sup>2</sup> միջին չափերով), որոնց օգնությամբ դահլիճը բաժանված է երեք նավերի: Դրանցից կենտրոնականի լայնությունը 4,46մ է, իսկ եզրայիններից հյուսիսայինինը՝ 3,3մ, և հարավայինը՝ 2,55մ: Նշված դահլիճի հյուսիսային պատն ունի 0,95մ հաստություն, հարավայինը վատ է պահպանված, արևելյանը խաթարված է, իսկ արևմտյանին, որի հաստություն 1,5մ է, կցված են երեք սենյակներ:

Դահլիճի մույթերը կառուցված են քարից՝ կրաշաղախի լիցքով և սվաղված են: Դրանք հարդարված են բազմագույն որմնանկարներով: Ելնելով հյուսիսային պատի հաստության փոքր չափից, ենթադրում ենք, որ դահլիճը կարող էր ունենալ փայտե ծածկ<sup>1</sup> [10]:

Վերը նշված տաճարամերձ կառույցներից բացի, հարավային կողմում պեղումներով շարունակվում են ի հայտ գալ տարբեր ժամանակաշրջանների շինությունների հիմքեր: Դրանց պեղումները դեռևս ամբողջացված չեն և ուսումնասիրությունները անավարտ են, սակայն պարզ է, որ այդ մասը եղել է խիտ կառուցապատված:



*Նկ.12. Մույթերով դահլիճի ներքին տեսքը*

<sup>1</sup> Դահլիճի ծածկի կառուցվածքի վերաբերյալ կա նաև այլ վարկած:

Պեղումները շարունակվում են՝ լրացնելով Արտաշատ մայրաքաղաքի նկարագրված թաղամասի կառուցապատման ընդհանուր պատկերը:

**А. Г.Канецян**

### **АРХИТЕКТУРА ПРИХРАМОВЫХ ПАМЯТНИКОВ СЕВЕРО-ЗАПАДНОГО РАЙОНА ПРЕСТОЛЬНОГО ГОРОДА АРТАШАТ**

*Представлена раскопанная часть юго-восточного района античного престольного города Армении – Арташата. Эта часть города охватывает сооружения центрально-храмового комплекса (храм, священная площадка, вторая площадка, сокровищница). Рассматриваются их планировочные и объемно-пространственные решения, как и планировочные решения прихрамовых сооружений (баня, пилонный зал).*

**Ключевые слова:** храм, священная площадка, известковая кладка, баня, святилище, зал, пилон

**A.G.Kanetsyan**

### **ARCHITECTURE OF CONSTRUCTIONS ADJOINING THE TEMPLE IN THE NORTH- WESTERN REGION OF THE CAPITAL CITY ARTASHAT**

*The newly excavated part of the south-western region of the ancient capital city of Armenia Artashat is represented. This part of the city covers the construction of the central temple complex (the temple, temenos, the second podium, the treasury). The space and planning conceptions of these constructions as well as planning conception of constructions adjoining the temple (public bath, pylon-hall) are considered.*

**Keywords:** temple, temenos, lim elaying, bath, treasure-house, pylon-hall

### **Գրականություն**

1. **Тацит.** Сочинение в двух томах: Т. 1. Анналы. Малые произведения. – Л.: Наука, 1969. –444 с.
2. **Плутарх.** Сравнительные жизнеописания в трех томах. Т.2. - М.: Наука, 1963. – С.546.
3. **Аракелян Б.Н.** Арташат 1 (основные результаты раскопок 1970-1977гг. ) – АРА 16. – Ереван: Изд-во АН АрмССР, 1982. - 68 с.
4. **Витрувий.** Десять книг об архитектуре. –М.: Изд-во Всесоюзной Академии архитектуры, 1936. - 332 с.
5. **Խաչատրյան Ճ.** Արտաշատի «ԵՐԱԶԱՍՈՒՅՆ» վայրի տաճարը և կից համալիրները // ՊԲՀ. - 2009. - N1. - էջ.122.
6. **Kunze E., Schleif H.** Die Badeanlage am Kladeos, IV.- Bericht uber die Ausgrabungen in Olympia 1940 - 1941. - Berlin, de Gruyter, 1944. – 166 s.
7. **Charitonidis S., Ginouves R.** Le bain romain de Zewgolatio près de Corinthe// BCH. – 1955. – LXXIX. - 144 p.
8. The Excavations at Dura-Europos. Preliminary report of sixth season of work, October 1932-march 1933. - New-Haven, 1936. - 518 p.



9. **Бохочадзе А.** Результаты работ настакинской археологической экспедиции. Полевые археологические исследования в 1974 году. - Тбилиси: Мецниереба, 1976. - 111 с.
10. **Խաչատրյան Շ.** Հին Հայաստանի սյունազարդ դահլիճների հարցի շուրջ // ՊԲՀ. – 2011. - N 1. - էջ.289:

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «Ուրարտական ճարտարապետության ազդեցությունը հին Հայաստանի ճարտարապետության վրա /մ.թ.ա.6-մ.թ.4դդ.» ծրագրի շրջանակներում:

*Կանեցյան Ամինիա Գուրգենի, պ.գ.թ., դոց. (ՀՀ. ք.Երևան) – ՃՇՀԱՀ, ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոն, (093) 841818:*

*Канемян Аминия Гургеновна, канд. ист.н., доц. (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, (093) 841818.*

*Kanetsyan Aminia Gurgen, doctor of Philosophy (Ph.D) in History, associate prof. (RA, Yerevan) - NUACA, Chair of Theory of Architecture, Restoration and Reconstruction of Historical Heritage, Fine Arts and History, (093) 841818.*

Ներկայացվել է՝ 02.09.2014

Ընդունվել է տպագրության՝ 18.09.2014